

գործերի մասին կարող է մի տեսակ խոս-
տովանութիւն համարվել: Մենք ցաւով նը-
կատեցինք, որ ազգային ժողովներէնց ամե-
նամեծի և ամենահաւանորի գործունէնե-
թեանը արդիւք գրվեցաւ և մինչև անգամ
վիրաւորանք հասցրվեցաւ: Այդ ժողովի
կանօնադրութեան յօդուածները, որոնք
գոյութիւն ունեն անհատական ազատու-
թեան պաշտպանութեան համար, ի չար
գործ դրվեցան և այն զէնքը, որ արված էր
համայնքների ժողովին նրա պաշտպանու-
թեան համար, անշորհալիսնրը նրա դէմ
դարձրին: Այդ հանգամանքը անհրաժեշտ
կերպով ուշադրութիւն է դարձնում օրէ-
նադրական ժողովի սպահովութեան վրա:
Ես յոյս ունեմ, որ դրա համար հարկաւոր
միջոցներ կը գործադրվեն: Իրա հետեանքը
այն եղաւ, որ ժողովուրդի ներկայացուցիչ-
ները այս տարի չափից դուրս շատ աշխա-
տեցին: Մենք յոյս ունենք այս տարի մի
գործ կատարել և բաւականութիւն տալ
երկրի ցանկութեանը օրէնսդրութիւնը ան-
հրաժեշտ փոփոխութիւններին ենթարկելով:
Բայց մենք գրեթէ չը կարողացանք կատա-
րել մեր պարտականութիւնը մենք ստիպ-
ված էինք կատարել մի այլ պարտականու-
թիւն, որ շատ արագ և ծանր է մանա-
ւանդ ազատամիտ կառավարութեան հա-
մար: Պարտաճանաչութիւնը ստիպեց մեզ
միացնել թագաւորութեան բաժնիներէնց մե-
կի մէջ սահմանափակել ազատութիւնը:
Այդ միջոցների գործադրութիւնը ոչ մի
իրանդացու համար այնքան ծանր չէր,
որքան կառավարութեան համար: Մենք
շատ լաւ դիտէինք, որ գործադրած
այդ միջոցները չարիքի սպիտակ չէին
կարող լինել, բայց նրանք անհրաժեշտ
էին, որպէս զի մենք կարողանայինք իսկա-
կան միջոցներ գործադրել: Այժմ ես յոյս
ունեմ, որ մենք կը կարողանանք լրացնել
մեր օրէնքները այնպիսի միջոցներով, որ կը
բարեկամեն մի քանի միլիոն իրանդացի մեր
հայրենակիցների դրութիւնը և կը նպաս-
տեն երկրի բարօրութեանը և հանգստու-
թեանը, որ մենք ամենքս ցանկանում ենք,
չը նայելով մեր քաղաքական համոզմունք-
ների գանազանութեանը: Այդ միջոցը թէ
և միակ է, բայց պատիւ կը բերէ 1881
թուականի պարլամենտի գործունէութեանը:
Մի քանիսն ենք մեղադրում են ազատամիտ
կառավարութեանը, որ նա իբր չափազանց
մեծ ուշադրութիւն է դարձնում ներքին
գործերի վրա և արտաքին գործերով բա-
ւական չէ զբաղվում: Բայց իմ կարծիքով,
այդպիսի նախադրեք այժմեան կառավա-
րութեան վերաբերութեամբ անիրաւացի է:
Մի ուրիշ անգամ 15 ամիսների կարճ ժա-
մանակամիջոցի ընթացքում այնքան նշա-
նաւոր հայացք չեն ծագել, որքան այժմ: Ես
չեմ կարող բաւական լինել աշխարհի զա-
նազան մասերի մէջ պատահած անցքերից:
Ես միայն միեւնթարթում եմ նրանով, որ
մենք վերջապէս սկսեցինք հանգիստ և խա-
ղաղ ճանապարհով ընթանալ: Ես հաւա-
տացած եմ, որ մեզ ոչ ոք չի մեղադրի այն
բանի համար, թէ մենք, մի կողմ թողնելով
կեղծ ամօթը և կեղծ հպարտութիւնը,
փոխանակ արիւնհեղ ճանապարհ ընտրելու
առանց պատերազմի և առանց արիւնահե-
ղութեան, առեւինք ուրիշներին միայն այն,
ինչ որ կը տայինք ամենափառաւոր յաղ-
թութիւններից յետոյ: Ինչ կը վերաբերի
Արեւելքին, արտաքին գործերի միջնորդու-
թեան աշխատանքները այդ երկրի մէջ կա-
տարեալ աջողութեամբ պատկերացան: Իշխա-
նութիւն ընդունելուց յետոյ մենք սնշարժ
դրութեան մէջ գտանք երկու հարցեր, ու-

րոնք Բելլինի դաշնագրի հետեանքներ էին:
Այդ երկու հարցերը՝ յունական և չեքոս-
լովական վճռված են բաւականացուցիչ
կերպով առանց արիւնհեղութեան, առանց
պատերազմի Եւրոպայի համաձայնութեան
և սուլթանի առողջ դատողութեան շնոր-
հիւ:—

ՇԱՀԱՒԷՏ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Հայաստանի ժողովուրդին այսօրուան ան-
հրաժեշտ պէտքերէն մէկն ալ դրամն է: Աս
անանկ խնդիր մ'է, որուն բնաւ տարակու-
սիլ պէտք չէ, որովհետեւ չորս անգամ չորսը
տասնվեց կ'ընէի պէս ճշմարտութիւն մ'է:
Գլխաւոր երկրագործ ժողովուրդը միշտ
դրամի պէտք ունի, զոր ձեռք բերելու հա-
մար շարունակ փաշտառուաց կը դիմէ:

Անագործն փաշտառուաց դրութիւնն ար-
դէն յայտնի է: Խեղճ գիւղացին 100 դու-
րուշի փոխառութեան մը համար քանի մը
պատիկը վաշխ կուտայ, և զարմանալին այն
է որ շատ անգամ ունեցածը չունեցածն ալ
եղը, ոչխարը, արտը և այլն կուտայ, և
դարձեալ պարտքէ չազատիր: Ուստի ճա-
րահատեալ՝ կը պարտաւորի Պոլիս գաղթե-
լու, ուր յայտնի է թէ ինչ թշուառ կեանք
կը անցնէ հեռու իր ընտանիքէն, գաւա-
կներէն և հայրենի երկրէն: Ահա այս է
Հայաստանցւոյն իր հայրենի երկրէն դուրս
գաղթելուն մէկ պատճառը:

Այս խնդրոյն նկատմամբ արդէն 4—5
անգամ դրամ ըլլալով՝ չենք ուզեր նորէն
անդրադառնալ: Արդ, գիւղացի երկրագործ
ժողովուրդը թէ անգութ փաշտառուաց ճի-
րաններէն ազատելու և թէ գաղթականու-
թեան պատճառը մասամբ վերցնելու հա-
մար կը փութանք հետեւեալ շահաւէտ ա-
ռաջարկութիւնն ընել:

Ուստի կ'ըսենք. Պոլսեցի 10 ազգայինք
եթէ 1000-ական ոսկի դրամագլուխ դնելով
գէթ առաջին անգամ կարնոյ մէջ պահեա
մը հաստատեն և տարին հարիւրին 12
տոկոսով փոխ ստակ տան, խիստ մեծ բա-
րիք մը ըրած կըլլան, բարիք մը, զոր սա-
կայն գործելու համար իրենց քսակէն բան
չպիտի կորսնցնեն. ընդհակառակն իրենք ալ
պիտի շահին, որովհետեւ հոս տարին հա-
րիւրին 6—7 տոկոսով ստակ տալու տեղ
կը փնտռեն շատ անգամ և չեն գտնիր:

Բայց թողունք իրենց շահը, զոր կարի-
ն է չուզեն հաշուի առնուլ, սակայն գտնէ
բարեգործութեան և ազգասիրութեան նը-
պատակաւ պէտք է որ այս բանին ձեռ-
նարկեն, հաստատելու համար թէ Հայերը
միայն խօսքով ազգասէր չեն:

Իսկ եթէ այսքան փոքրիկ զոհողութիւն
մ'ընեն անկարելի է, ան առնեն կը հարց-
նենք իրաւամբ թէ չոր խօսքով Ս. Պատ-
րիարքը կուզենք ըսել ինչ նշանակութիւն
ունի:

Բառերնիս ճշգնեք.—հրաշք կուզենք
ըսելն աւելի կը պատշաճի:

(Ա. յ. Ս.)

ՆԱԽԱԿ ԱՌԱՋԻՆՈՒՄ

Բաղ-Հալլ, 10 օգոստոսի

Մեզանում, թէ Հայաստանում և թէ Վրաս-
տանում, սովորութիւն կայ պաշտել ուխտաւոր-
ները, այսինքն Ս. Սարգիս, Ս. Գեորգի, Թէլէթ,
Բօլնիս, կամ Երեւանի նահանգի զանազան խաչ-
քիւր, օրինակ Ս. Մուրադ, կամ Լուսն գաւառի
Ս. Նշանը, Ս. Օմանը (Յովհաննէս Խմատաւորի գե-
ղովմանը) որոնք են վերջին յոյսը մեր հայ հի-
ւանդների փառացիների թելադրութեամբ կամ
իրանց դարձելու յոյսերով մեր հիւանդաւորները
տանում են խաչերի դուռը թողլ և յետին աս-
տիճանի հիւանդութեան հասած խեղճերին, ջար-
գելով նրանց կողքերը սայլերով, որպէս զի խա-

չը փրկութիւն տայ, ոչխարներ են գոհում մոմեր
գաւառով, լաց լինելով աղաչում բող-ձիւտը Ս.
Սարգիսին, կամ կարմիր-ձիւտը Ս. Գեորգին հի-
ւանդին առողջութիւն վերադարձնեն: Իսկ այդ
ժամանակ խաչից իր լաւանայուն սպասելով
խեղճ նեղացած հիւանդը ընկած է լինում ան-
յարմար, խնաւ գեղեցիկոր խրճիթում, առանց
բժշկի օգնութեան, անգութ է և օրից օր աւելի
մոտենում մահվան դրանը: Շատերը ուխտաւոր-
դից վերադառնալով ճանապարհի վրա են մեռ-
նում: Արդը ակամայ սարսափում է ինքն իրան
հարցնելով՝ մինչև երբ պէտք է նահապետական
նախապաշարմունքներով ապրի և չարարվի մեր
ժողովուրդը, յոյս դնելով քարերի, խաչերի, մա-
տուռների պատերի, մատուռների վրա և ոչ թէ
ընտելներից տուած և գիտութիւնից մշակած բը-
ժշկական առատ, դրական միջոցների վրա: ...

Իմ հասկացողութիւնից շատ բարձր է, որ ես
վեր առնեմ մանրամասն նկարագրեմ Եւրոպայի
բոլոր հանքային ջրերը և կամ արանց ամենքի
գորութիւնը և նշանակութիւնը. միայն կասեմ որ
Աւստրիայի մէջ կան զանազան ջրեր, այլ և այլ
անուններով և նշանակութեամբ, որոնք են՝
Կարլս-բադ, Ֆրանց-բադ, Մարիեն-բադ և շատ
ուրիշներ, վերջապէս և այն ջրերը, ուր ես այս
բաղեւի բժշկվում եմ: Բաղ-Հալլ, Սրա ջուրը
ե օգտային է, նրան խմում են և նրա մէջ լողա-
նում: Այն ջրերը ուղարկվող հիւանդներն են՝
անդամաւորները, բորոտները, վիրաւորածները,
խուլական ցաւերով հիւանդները, սիֆիլիտական-
ները և այս ցաւից միացորդ ունեցողները, թողլ
կապուտածք ունեցողները և բժշկատեղում հի-
ւանդները, որոնց թէլէն և ես եմ պատկանում:
Բժշկութիւնը խիստ և կանոնաւոր է, բայց և ուրիշ
կողմից հիւանդը վարձատրված է գեղեցիկ բնու-
թեամբ, որի մէջ նա պարւում է: Գեղեցիկ ան-
տառ, որի մէջ չինած են զանազան ուղղութեամբ
հարթ ու կոնիկ ճանապարհներ, ծաղկանոցներ,
ջրնոցներ և աւազաններ, անպատմելի բարե-
խառն օդ.—այդ բոլորը հանգստացնող կերպով
է ազդում հիւանդի վրա:

Հիւանդները ամեն տեսակ ազդութիւնների
ներկայացուցիչներ են, որոնց թուում կան այժմ և
հինգ հայեր: Սրանց բոլորը կապում է միմիայն
համաշխարհային ֆրանսիական լեզուն: Զբոսաւոր
վրա, ջուրը խմելու ժամանակ, երաժիշտները ա-
ծում են զանազան երաժշտական եղանակներ.
Ջուրը խմուլուց յետոյ, եթէ լաւ եղանակ է, ա-
մենքը ժողովում են: Այսինքն յաջող է, որ-
տեղ դրած են շատ թուով սեղաններ և որտեղ
հիւանդները կարող են նստաւոր լինել: Մի
կէս ժամից յետոյ հիւանդները գնում են լողա-
նալու: Անկարելի է պատմել թէ որքան կարգ
ու մաքրութիւն է տիրում բաղնիքներում, որ-
չափ ամեն բան այդտեղ յարմարեցած է հի-
ւանդների համար: Բաղնիքներ մտնելու պէս աչ-
քիդ ընկնում է հիւանդի, մաքուր, մարմարեայ
աւազանը, ծառան խոլոյն փուռ է սպիտակ
սաւանը աւազանի մէջ, որ հիւանդի մարմինը
սաւան քարին չը դիպչի, իսկ 28 աստիճան ու-
նեցող ջրից դուրս գալուց յետոյ, արդէն պատ-
րաստ է տաքացած սաւանը որ հիւանդը բաղա-
նիքից դուրս գալով չը միսի: Բժշկների հոգալու-
ղութիւնը հիւանդների մասին անպատմելի է,
բայց նրանց ամեն մի պատուէրը պէտք է կա-
տարվի ճշգրտութեամբ, որովհետեւ ամբողջ օրը բա-
ժանված է ճշգրտութեամբ կանոնաւոր ժամանակա-
միջոցների վրա: Նշանակված է արդ պէտք է ջուր
խմել, որքան ժամանակ դրոսնել, որքան ժամա-
նակ տանք հանգիստ նստել, երբ նախաճաշիկ
ուտել, երբ լողանալ, երբ ճաշել, որ ժամին տուն
վերադառնալ և այլն:

Այժմ կը փորձեմ փոքր ինչ նկարագ-
րել Բաղ-Հալլի գիրքը: Վիշնայից երկաթուղին
բերում է ձեզ մինչև Շտայէր փոքրիկ քաղաքը,
որտեղից երկու ժամով ճանապարհով կառքով
տանում է ձեզ մինչև Բաղ-Հալլ: Շտայէրից
դուք անդադար բարձրանում եք դէպի սարերը
տափարակ գեղեցիկ դաշտերով: Բաղ-Հալլի
գիրքը, ինչպէս ինձ ասեցին 3200 ֆուտ բարձ-
րութիւն ունի ծովի մակերևոյթից: Ազգիդ առաջ
երևում են գեղեցիկ լեռներ խիտ անտառներով
պատած: Գէպի արեւմուտքը տեսնում ես անհա-
մար բլուրների զանազան բարձրութեամբ, որոնց
ստորոտում փոքր գիւղեր են, իրանց արտառա-
ղերով և վարեկանայինով: Գիւղատնտեսութիւնը
շատ կատարելագործված է երևում: Երկու ձիով
մեծ արօրը վարում է աւելի հեշտութեամբ, քան
թէ միւսանում 12 ջուրով զօրեղ գոմէշներ: Այս-
տեղի գիւղացին իրան աւելի բաղադար է հա-
մարում քան թէ աղտակաւ կալուածատէրը
մեղանում: Գէպի հիւսիս տեսնում ես շատ մեծ
տափարակ դաշտ, որի վերջը չէ երևում և որի
վրա կան բազմաթիւ, մին միւսից հեռու
գիւղեր, գեղեցիկ ապրիներով և շատ սև վարե-
կանով: Այստեղ հողը երկու և երեքմե երեք
անգամ են ցանում: Օրինակ հացը հնձելուց յե-
տոյ, իսկոյն վարում են և ճարխալ, բոլոյ և
զազար են ցանում, իսկ եօնջան և խրտուկը
ցանում են անպատճառ երկու անգամ: Խոտն
էլ երեք անգամ են հնձում: Միով բանիւ գիւ-
ղատնտեսութիւնը այնքան է առաջ գնացել այս-
տեղ ու կատարելագործվել, որ մինչև անգամ
մեր յարգելի բանաստեղծ Բաղմիւրին էլ դժուար
կը լինէր կրթել որ և է ժամանակ մեր ամեն-
քիս արտիկ մօտիկ խեղճ, անտէր և մոլորած
հայ գիւղացու համար հասնել այդ նախանձելի
դրութեանը:

Հ. Արովեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Поробок» քաղաքում կարգում ենք հետե-
ւեալ լուրը Լօնդոնից: Անգլիական միջնորդու-

թիւնը եռանդոտ կերպով պնդում է Կ. Պօլսում
Արմենիայի մէջ բէֆօրմներ մտցնելու մասին:
Լօրդ Կեթօրին խորհուրդ է տալիս սուլթանին
տալ բէֆօրմներ իր սեփական կամքով, առանց
սպասելու պետութիւնների միջամտութեանը:
Անգլիական կառավարութիւնը, հրատարակել է,
ինչպէս յայտնի է, Կապոյտ-գիրքը փոքր-Ասիայի
և Սիրիայի դրութեան մասին: Այդ գրքում բո-
վանդակված է լօրդ Կեթօրինի և Կօչէնի նամա-
կագրութիւնը այն գեղծունեների, և խոստութիւն-
ների մասին, որոնք կատարվում են Արմենիա-
յում: Արմենիայի դրութիւնը այդ պաշտօնական
գրքի մէջ համեմատվում է Բօլքարիայի դրու-
թեան հետ 1877 կոտորածների ժամանակ: Լօրդ
Կեթօրին իր հեռագիրներից մինի մէջ յանձնում
է Կօչէնին յայտնել սուլթանին, որ հայերի համ-
բերութիւնը սպառված է և որ նրանք ամեն բա-
նին պատրաստ են: Միայն որ կարողանան այդ
յուսահատական դրութիւնից դուրս գալ:

— Կ. Պօլսի «Լոյս» լրագրի մէջ կարդում ենք
հետեւեալը: Ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ Ազա-
րեան սրբազանը հրաման ըրեր է որ կաթօլիկ
կաթօղիկոսարանի մէջ հայերէն լեզուն խօսվի:
Կը փափաքենք որ ճշգիւ գործադրվի սոյն հրա-
մանը, զոր դէպ ազգային միութիւն քայլ մը կը
համարենք: Այսպէս կըսենք, որովհետեւ ազգի
մը գլխաւոր յատկանիշներէն մէկն ալ լեզուն է:

— Նոյն լրագրում կարդում ենք և հետեւեալը:
Սերաստիոյ դեր. Պետրոս Կալոկոպոս, պատ-
րիարքական փոխանորդ գեր. Ռուսոպոլեան,
գեր. Տ. Բովհաննէս Մկրեան և մեծ. Ա. Ֆրէն-
կեան, Բ. Թէլեան և Կ. Խաչատուրեան էֆէնդի-
ները կաթօլիկ-հայոց պատրիարքարանի երկա-
թով ի դիմաց ամեն. պատրիարք հօր Ազարեան
սրբազանի ընտրութիւնը շնորհաւորեցին: Կեր.
Մկրեան գեղեցիկ բանաստեղծութիւն մը ըրաւ,
որուն համակրալի կերպով պատասխանեց Ազա-
րեան սրբազանը և խնդակցութիւն յայտնեց
սրբազան պատրիարք Ներսէսին հրաժարականը
չընդունվելու համար: Կեր. Ազարեան անձամբ
այցելութիւն պիտի գայ կըսվի առ ամեն. Ս.
Պատրիարքն, որ նոյնպէս պիտի փոխարինէ:
Պաշտօնական այցելութիւնքն աղէկ, սակայն
այսպիսի քաղաքավարական ցոյցերով պիտի
կրնան անհետ լինիլ արդեօք անցեւոյն դառն
հետքերն, թէ մոլեռանդութիւնը տակաւին նոր
զոհեր պիտի բերէ իր հետ: Ազարեան սրբազանի
ընտրութիւնը կրնայ նոր դարաւորու մը բանալ,
եթէ ն. բարձր. սրբազանութիւնն ազգային միու-
թեան ոյժ տուող ընթացից մէջ գտնվի:

— «Morning Post» լրագրին գրում են, որ
կոմս Կօրտի, Կ. Պօլսի խաղական գեսպանը,
ստացաւ հրահանգներ կառավարութիւնից, որով
նրան առաջարկվում է Անգլիայի գեսպան Գը-
ֆօրդին հետ համաձայնութեամբ գործել Արմէ-
նիայի մէջ մտցնելիլ բէֆօրմների հարցի վերա-
բերութեամբ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻՋ, 10 օգոստոսի: Ընտրութիւնների
ժամանակ յաղթեցին չափաւոր հանրապե-
տականները: Բօնապարտիստները յաղթված
են: Առ այժմ ընտրված են 279 հանրապե-
տականներ, 39 միապետականներ 46 կրկ-
նաբուէարկութիւններ պէտք է լինեն: Գամ-
բետա ընտրվեցաւ Բելլիլի երկու շրջան-
ների մէջ:

ՆԻՒԻՐՈՒԿ, 10 օգոստոսի: Նախագահ
Գարֆիլդի կեանքին փոսնդ է սպառնում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 օգոստոսի: Պետական
բանկի 50% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 96 ռ. 25 կ., երկրորդ 94 ռ. 50 կ.,
երրորդ 94 ռ. 75 1/2 կ., չորրորդ 94 ռ. 25
կ., ներքին 50% առաջին փոխառութեան
տոմսակը արժէ 231 ռ. 75 կ., երկրորդ
228 ռ. 50 կ., արեւելեան տոմսին փոխա-
ռութեան տոմսակը արժէ 91 ռ. 25 1/2 կ.,
երկրորդ 91 ռ. 25 կ., երրորդ 91 ռ. 37 կ.,
ոսկի 7 ռ. 76 1/2 կ.: Ռուսաց 1 բուրլ Լօն-
դօնի վրա արժէ 25,81 պենս, ռուսաց 100
ռ. Համբուրգի վրա արժէ 205 մարկ: Բօր-
սայի արամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ